

ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ
ԵՒ ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ
ԳՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ
ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. ԵԳԻՊՏԱԿԱՆ ՀԻԵՐՈԳԼԻՖԻԿ ԳԻՐ

Ա. ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

1. Գիրը մարդկային քաղաքակրթութեան կարեւորագոյն յայտնագործութիւններից է: Հաղորդակցման ոչ գրային միջոցները (ձայն, շարժում, դիմախաղ եւ այլն) ակնթարթային են, անցողիկ ու ենթադրում են հաղորդակցութեան մերձութիւն: Գիրը վերացրեց տարածա-ժամանակային արգելքները եւ մարդուն հնարաւորութիւն տուեց իր խօսքն ապրեցնել շատ աւելի երկար, քան սեփական կեանքի տեւողութիւնն է եւ դուրս հանել շատ աւելի հեռուներ, քան իր կենսատարածքի չափերն են: Դա իր հերթին հնարաւորութիւն տուեց իրարից մեծ հեռաւորութիւնների վրայ ապրող մարդկանց փորձն ու իմացութիւնը կուտակել, ընդհանրացնել եւ ստեղծել միասնական հոգեւոր-մշակութային կենսատարածք, ինչը ազգի ձեւաւորման կարեւոր նախապայման է: Գիտութեան մէջ այսօր տիրապետում է այն կարծիքը, թէ աշխարհի հնագոյն գրային համակարգերը Ք.ա. 3300-3200թթ ստեղծուած շումերական եւ եգիպտական պատկերադրերն են:

2. Միւս կողմից, հին աշխարհի պատմութեան հիմնարար եւ սակայն դեռեւս չլուծուած խնդիրը հէնց շումերական եւ եգիպտական քաղաքակրթութիւնների ծագման հարցն է: Շումերական քաղաքակրթութեան ակունքները հասնում են Ք.ա. 6-րդ հազ. կէս (Ուբեյդ), իսկ եգիպտական քաղաքակրթութեանը՝ Ք.ա. 6 հազ. վերջ (Բաղարի, Մերմիդէ, Ֆայում): Այս քաղաքակրթութիւնները հիմնողներն իրենց հետ Միջագետք ու Նեղոսի հովիտ

են բերում զարգացած երկրագործական եւ անասնապահական մշակույթ, Ճարտարապետություն, արհեստներ, դիպարանություն եւ գիր: Հնագիտական տուեայները հիմնադրապէս ցոյց են տալիս, որ Ք.ա. 6 հազ. նախորդող ժամանակաշրջանի Միջագետքում եւ Նեղոսի հովտում այդ մշակույթների փուլային զարգացման հետքերը բացակայում են: Գիտություն մէջ ձեւակերպուած «ովքեր էին այդ մշակույթի կրողները եւ որտե՞ղ էր նրանց նախահայրենիքը» հարցադրման պատասխանը ղեռնու բացայայտուած չէ:

3. Դեռեւս ժ.Թ. դ վերջին եւ Ի. դ սկզբին կարծիքներ էին յայտնուել, թէ շումերական եւ եգիպտական քաղաքակրթությունները ստեղծողները Հայկական լեռնաշխարհի ընկերներն էին:¹ Նախկինում պատշաճ ուշադրութեան չարժանացած այս տեսակէտը ներկայումս ունի հնագիտական անհերքելի հիմնադրումներ: Վերջին մի քանի տասնեակ տարիների ընթացքում պատմական Հայաստանի տարածքում կատարուած պեղումների արդիւնքները (Çayönü, Hallan Çemi Tepesi, Hassuna, Göbekli, Nevalı Çori եւ այլն) ցոյց են տալիս, որ Տիգրիս եւ Եփրատ գետերի վերին հոսանքներում Ք.ա. ԺԲ-է. հազարամեակներում գոյություն է ունեցել զարգացած՝ երկրագործությունը իւրացրած եւ տաճարական համալիրների կառուցող միասնական մշակույթ:²

4. Պատմական Հայաստանի տարածքի այսօր յայտնի եւ ծագումնաբանօրէն ամենահին ու ամբողջական հնագիտական նիւթը ժայռապատկերներն են: Հայկական լեռնաշխարհի ժայռապատկերներն իրենց ծաւալով, կատարման տեխնիկայով, նշանների բազմաքանակութեամբ ու սիւժեների բազմազանութեամբ աշխարհում չունեն իրենց նմանակը: Միաժամանակ, հայկական ժայռապատկերների որոշ առանձնապատկություններ թոյլ են տալիս ենթադրել, որ ժայռապատկերային նշանները գործածուել են որպէս գիր, իսկ ամբողջական կոմպոզիցիաներն ունեցել են հոգեւոր եւ ծիսական նշանակություն:³ Յաւօք սրտի, առայժմ չեն հետազոտուել հայկական ժայռապատկերների եւ հին աշխարհի գրային համակարգերի առնչությունները: Սոյն աշխատանքում փորձ է արւում լրացնել այդ բացը:

¹ Տե՛ս օրինակ՝ W.B. Emery, *Archaic Egypt*, Edinburg, 1961.

² The Cambridge Ancient History, ed. by J. Bury et al, v.1, Cambridge, 1928; I. J. Gelb, *Hurrians and subarians*, Chicago, 1944.

³ Տե՛ս CANew նախագծի տուեայները: <http://www.canew.org/download.html>

⁴ Հ. ՄԱՏՄԻՊՈՍԵԱՆ, ՈՒԼՆՔԻ եւ շումերներն ու եգիպտացիները, Հայաստանի Հանրապետություն, 12 մայիս, 2006:

Որպէս հետազոտման նիւթ, վերցրել ենք Ուխտասարի եւ Ջերմաձորի 802 ժայռապատկերները, որոնք հրատարակուած են «Սիւնիքի ժայռապատկերները» աշխատութեան մէջ⁵:

Բ. ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ
ՈՐՊԵՍ ԳՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

1. Ժայռապատկերները հետազոտող շատ գիտնականներ են (Խ. Սամուէլեան, Գ. Ղափանցեան, Լ. Բարսեղեան եւ այլք) կարծիք յայտնել, թէ ժայռապատկերը հաւանաբար գրի նախնական ձեւ է: Սակայն ժայռապատկերներն առաջնահերթ ու հաստատապէս գրային համակարգ է ընկալուել հայ ժողովրդի կողմից եւ այդ ընկալմանը համապատասխան տրուել է «Իծագիր» բնութագրերը: Առաջին հայեացքից կարող է թուալ, թէ «Իծագիր» անուանումը տրուել է միայն այն պարզ պատճառով, որ ժայռապատկերների մէջ մեծ թիւ են կազմում այծերի պատկերները: Ի դէպ, գիտնականների կողմից հէնց այդպէս է մեկնաբանուել «Իծագիր» անուանումը: Իրականում «Իծագիր» անուանումը գալիս է այն անյիշելի ժամանակներից, երբ երբ փորագրուում էին ժայռապատկերները, երբ նոր էր ձեւաւորուում գիրը: «Իծագիր» անուանման պատճառներից հիմնականն այն էր, որ «այծ» եւ նախնական «գիր» հասկացութիւններն ունեցել են համահունչ անուանումներ: Այդ համահունչ անուանումների զոյգերը առկայ են հայերէնում, շումերերէնում եւ եգիպտերէնում:⁶ Այսպէս՝

mašdara = «վայրի այծ» եւ «արձանագրութիւն» (շումերերէն)

sr, zr = «ձար, նոխազ, խոյ» եւ «գրել» (եգիպտերէն):

⁵ Գ. ԿԱՐԱԽԱՆԵԱՆ, Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, Պ. ՍԱՖԵԱՆ, «Սիւնիքի ժայռապատկերները», Երեւան, 1970:

⁶ Շումերերէնի տուեալները ըստ Պենսիլուանիայի համալսարանի շումերերէն-անգլերէն բառարանի <http://psd.museum.upenn.edu/epsd/nepsd-frame.html> եւ R. Labat, Manuel d'epigraphie akkadienne, Paris, 1948.

Եգիպտական հիերոգլիֆների նշանները եւ նրանց իմաստները՝ ըստ Hieroglyphica, Publications Interuniversitaires de Recherches Egyptologiques Informatisées, Vol.I, ed. N. Grimal, J. Hallof, D. van der Plas, Utrecht, Paris 1993; E. A. W. Budgt, Egyptian Hieroglyphic dictionary, v. I-II, New York, 1978; Wörterbuch der ägyptischen sprache, im Auftrage der deutschen Akademien hrsg. von Adolf Erman und Hermann Grapow. Bd. I-V. Unveränderter Nachdruck. Berlin, 1971.

«Շումերերէն լեզու» հասկացութիւնը արտայայտուում է emegir բառով, իսկ նոյն բառը $udu=այծ$ ցուցիչով (^{udu} emegir) նշանակում է «այծի տեսակ»: Շումերերէնում «գրել» բառը հնչեցւում էր sar, որը նոյնական է եգիպտերէն st, zt = «գրել» բառի հետ, իսկ երկուսի հայերէն համապատասխանն է՝

շար = «կարգ, շարուածք, խումբ»

սարել = «կազմել, հիւսել, կապել»

ծիր = «գիրծ, շրջագիրծ, կարգ, ակօս», որից՝ ծրել = «գրել»:⁷

Պատկերա-գաղափարադիր գրային համակարգում հայերէն վերոյիշեալ բառերին համանուն է հայերէն ձար = «նոխազ, խոյ» բառը: Հետեւաբար վերացական շար, սար, ծիր հասկացութիւնները հնչեցնելու համար անհրաժեշտ կը լինէր նկարել ձար՝ նոխազ: Սրանից գատ, հայերէնն ունի «գիր» եւ «այծ» գաղափարների այլ համահունչ անուանումներ: Հայերէնում համանուն ու համահունչ են խազ = «այծ» եւ խազ = «գիր» բառերը: Մետրոպատառ հայերէնում «խազ» բառն առաւել գործածական է «գիրծ, գիր» իմաստով եւ միաժամանակ երաժշտական նշանագրերի հաւաքական անուանումն է (խազեր): Հայերէնում «խազ» է անուանուում նաեւ արու այծը (յոզ. խզան):⁸ Պիտի կարծել, որ գրի վերոյիշեալ բոլոր անուանումները նախապէս ունեցել են միայն «այծ» իմաստը: Որոշակի գաղափար արտայայտելու նպատակով այծի պատկեր նկարելու պրոցեսին զուգընթաց հաւանաբար այծի որոշ անուանումների վերագրուել է նաեւ «գիր» իմաստ: Այդ մասին են վկայում նաեւ ազգագրական նիւթերը: Այծ = գիր նոյնացումը առաւել ցայտուն ու հակիրճ է արտայայտուած հայկական հանելուկներում: Բերենք մի քանի օրինակ:⁹

«Սպիտակ պռակ (=պուրակ, անտառ), սեւ-սեւ էծեր: (Ղաւրաղ)

«Սեւ էծը սպիտակ դարի վրէն արածում ա»: (Վաղարշապատ, Վան, Դովրի)

⁷ Երեմիա Մեղրեցու բառարանում վկայուած է «տ» ածականով եւ «սար» արմատով կազմուած «սարտ» = «գրոյ շափ» բառը: Եթէ բառի վկայութիւնը ճիշտ է, ապա ունենք հայերէն սար = «գիր», որը բացարձակ նոյնական է շումերերէն sar եւ եգիպտերէն st բառերի հետ:

⁸ Հնարաւոր է շատուարանուած նոխազ = «հօտի առաջնորդ արու այծ» բառը եւս կազմուած է խազ = «արու այծ» արմատով (= նազ/խ + խազ = առաջին այծ):

⁹ Հայ ժողովրդական հանելուկներ, կազմող Ս. Յարութիւնեան, Երեւան, 1965, էջ 178:

«Սիվտակ կող, սեւ իծան մէջ կարածան»։ (Ալաշկերտ, Ղարարաղ)

«Ճորմակ լեռներ, սեւ-սեւ էծեր»։ (Ղարարաղ)

«Սեւ ածերն, ճերմակ փերն (=բլրակ) մաղուածին»։ (Խոտըր-ջուր)

«Տեկմե (=պատահական) չորան չեն կրել ածեր»։ (Կեսարիա, Խարբերդ)


Հանելուկների բերուած օրինակներում այժը ներկայացնում է «գիր» գաղափարը։ Կարելու է եւ այն փաստը, որ բերուած մի քանի օրինակների աշխարհագրութիւնը ծածկում է պատմական Հայաստանի ողջ տարածքը։

2. Գրի ծագման նախնական փուլում, երբ դեռեւս վեջնականապէս չէր ձեւաւորուել «գիր», «գրել» գաղափարը, գրելու գործողութիւնը պիտի արտայայտուէր պատկերները կարգաւորուած շարելու, հիւսելու, կազմելու, խազելու, գծելու միջոցով։ Պէտք է ենթադրել, որ շումերերէն *sa* եւ եգիպտերէն *sr*, *zr* բառերը «գրել» իմաստի համար ունեցել են նախնական «շարել, սարել, ծրել» իմաստները։ Այս ենթադրութեան իրաւացիութիւնը ստուգելու համար անհրաժեշտ է քննել շումերերէն *sa* եւ եգիպտերէն *sr*, *zr* բառի համանունները։ Շումերական նիւթին կ'անդրադառնանք յաջորդ աշխատանքում, իսկ ստորեւ ներկայացնենք եգիպտերէն *sr*, *zr* բառի համանունները եւ հայերէնի համապատասխան գուգահեռները։ Միայն յիշեցման կարգով նշենք, որ եգիպտերէն գիրը բաղաձայնային է։

Եգիպտերէն համաձայնները	Հայերէն գուգահեռը	Հայերէնի իմաստը
<i>sr</i> = ծեր մարդ	ծեր	ալեւոր, պառւած մարդ
<i>sr</i> = դեկավար, իշխան, ազնուական	սար	գլուխ, գլխաւոր, իշխան
<i>sr</i> = կարգաւորել, դասաւորել, շարել	շար, սար	կարգ, շարուածք։ կապ, կազմ
<i>sr</i> = քուրդ	սար	քուրդ
<i>sr</i> = գրել, գծել	ծիր, սար, շար	գրել, գծել, շարել
<i>sr</i> = այծ, խոյ	ճար	նոխազ, խոյ
<i>sr</i> = մազ	ճար	մազ
<i>sr</i> = մետ	սայր	ծայր, սուր կողմ
<i>sr</i> = իւղ, կարագ	սեր	կաթի երեսի իւղը
<i>sr</i> = հացահատիկ	ցոր-	ցորեն, հացահատիկ
<i>sr</i> = ցրել, սփռել	ցր-	ցրել, սփռել
<i>sr</i> = երկնքի 36 մասերից մէկը	սր-	սրական գօտի, մեծասիր գօտի
<i>sr</i> = կաշի	սեր-	սերել, կաշի

ինչպէս տեսնում ենք, եզրիպտերէնի համանունների այս շարքի հայերէն զուգահեռները եւս բաղաձայն համանուններ են: Եզրիպտերէն եւ հայերէն նոյնական համանունների այս շարքը հիմք է տալիս պնդելու, որ եզրիպտերէնում եւ վաղնջական հայերէնում «գրել» իմաստն արտայայտելու համար օգտագործուել է նոյն բառը:


3. Ժայռապատկերների հպանցիկ ուսումնասիրութիւնն իսկ ցոյց է տալիս, որ նրանք, ի տարբերութիւն տեսարանային գրի, իսկապէս ստեղծուել են պատկերները կարգաւորուած շարելու սկզբունքով եւ որոշակի նպատակային ինֆորմացիա հաղորդելու նպատակով: Կոմպոզիցիաներում պատկերները դասաւորելու ամենատարածուած ձեւը մի գծի վրայ շարելն է (տես նկ. 1):



Նկար 1.

Ընդ որում, պատկերների գծային շարքի դէպքում պատկերները գրառուել են եւ հորիզոնական, եւ ուղղահայեաց շարքերի տեսքով (տես նկ.2): Նաեւ հանդիպում են պատկերների շրջանաձեւ (ծիր), գալարաձեւ, աղեղնաձեւ դասաւորման դէպքեր: Մեր կարծիքով պատկերների դասաւորման ձեւի ընտրութիւնը կախուած էր ներկայացուելիք թեմայի վերաբերեալ գոթութիւն ունեցած աշխարհընկալումային պատկերացումներից:

4. Վերջապէս, ժայռապատկերները վաղնջական գիր լինելու տեսակէտի օգտին է վկայում նաեւ այն փաստը, որ բացի մարդու եւ կենդանիների պատկերներից, մեծ թիւ են կազմում վերացական նշանները (տես նկ. 1,2): Ուխտասարի եւ Զերմաձորի 802 ժայռապատկերային կոմպոզիցիաների մէջ վերացական նշանների թիւը մօտ 200 է:



Նկար 2.

Այս պարադայում կարելոր է եւ այն փաստը, որ իւրաքանչիւր նշան ունի գործածման որոշակի յաճախութիւն, ինչը իւրայատուկ է ձեւաւորուած գրային համակարգին: Ստորեւ, աղիւսեակի տեսքով, բերուած են 802 ժայռապատկերներում մի շարք նշանների գործածութեան թուերը: Վերացական նշանների մեծ քանակը եւ ժայռապատկերներում նրանց յայտնուելու որոշակի յաճախութիւնը եւս վկայում են, որ Ուխտասար-Ջերմաձորի ժայռապատկերները զարգացման որոշակի փուլում գտնուող գրային համակարգ էր:

Նշանը	Քանակը	Նշանը	Քանակը
⊕	47	□	11
○	35	⊞	13
Υ	34	8	12
+	31	Բ	7
⊙	12	Н	9

Գ. ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՅՈՒԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԼԵԶՈՒՆ

1. Եթէ ժայռապատկերները պատկերա-գաղափարագիր արձանագրութիւններ են, ապա, ինչպէս գրչութեան ցանկացած ձեւի համար, այստեղ եւս արձանագրողը պիտի արձանագրէր իր լեզուի բառապաշարով: Պատկերագրութեան մէջ գրի հնչիւնական կազմակերպման հիմքում դրւում էր հնչիւնական ռեբուսի սկզբունքը: Վերացական հասկացութիւն արտայայտող բառը հընչեցնելու համար պատկերում էին այդ բառին համահունչ անուանում ունեցող առարկայի պատկեր (համանունութեան սկզբունք): Եթէ երկու բառ համանուն են տուեալ լեզւում, ապա այդ համանունութիւնը միայն այդ լեզուի առանձնայատկութիւնն է եւ չի կրկնուում մի այլ լեզւում: Օրինակ՝ անգլերէն sow բառը միաժամանակ նշանակում է «ցանել» եւ «խոզ», կամ, you=դու, դուք եւ ewe=ոչխար բառերի հնչողութիւնը բացարձակ նոյնական է (ju:) եւ այս բառերը համանուն եւ համահունչ են միայն անգլերէնում: Եթէ ժայռապատկեր նկարողը անգլիախօս լինէր, ապա նա «դու» գերանունը հնչեցնելու համար պիտի նկարէր ոչխար:

2. Ժայռապատկերների հեղինակներն առաւել յաճախ պիտի ջանային հնչեցնել իրենց աստուածների անունները, նրանց հոլթեան ու գործունէութեան առանձնապատկութիւնները եւ աստուածներին ուղղուած իրենց ցանկութիւններն ու փառաբանութիւնը: Այս ասպարէզում մեծ թիւ են կազմում վերացական հասկացութիւնները: Զշմարիտ աստուածապաշտութիւնն անյիշելի ժամանակներից ի վեր մարդու կողմից ընկալուել է որպէս մի ծիսապաշտամունքային կառոյց, որն ունի երեք հիմնասիւն.

ա. Աստուածն է կեանք արարողը, կեանք տուողն ու ետ առնողը,

բ. Աստուածն է իր ստեղծած արարածներին սնունդ տուողը,

գ. Աստուածն է դատողը եւ ցանկալի հանդերձեալ կեանքի արժանացնողը:

Ապրող մարդու համար առօրեական եւ առաջնահերթ խնդիրը եղել ու մնում է սննդի հայթայթումը: Մարդն աստուածատուր սնունդը ստանում է բուսական ու կենդանական աշխարհի միջոցով եւ բնական է, որ հէնց բոյսերն ու կենդանիներն ընկալուէին որպէս սննդի մատակարար միջնորդներ Աստծոյ եւ մարդու միջեւ: Բոյսերի ու կենդանիների միջոցով է Աստուած սնունդ տալիս կամ զրկում սնունելու միջոցից: Եւ պատահական չէ, որ սկսած հնագոյն դիցաաշխարհընկալումային պատկերացումներից, աստուածներն ունէին հասցէաւորուած կողեր բուսական եւ կենդանական աշխարհում: Դիցաբանութեան մէջ բացառիկ տեղ ունէին եւ առաւել գործածական էին կենդանական կողերը:

Աստուած-կենդանի նոյնացումը եւս կատարուել է Աստծոյ որեւէ մականուան եւ տուեալ կենդանու համանունութեան սկզբունքով: Օգտագործելով համանունութեան սկզբունքը, փորձենք բացառապէս աստուած-կենդանի կողաւորումն ըստ Ուխտասար-Ջերմաճորի ժայռապատկերների:

3. Յիշեալ 802 ժայռապատկերներում առկայ են մարդու եւ կենդանիների 4133 ամբողջական պատկերներ, որոնք, ըստ կենդանիների տեսակների, ունեն հետեւեալ բաշխուածութիւնը¹⁰:

¹⁰ Քանի որ որոշ դէպքերում ժայռապատկերներում դժուար է յովազին զանազանն առիւծից եւ շանը գայլից, ապա առիւծ եւ շուն անուանումների տակ համապատասխանաբար բերուած են նաեւ յովազի եւ գայլի պատկերների թիւը:

№	Կենդանու անուանումը	Ընդհանուր թիվը	%	Ցանախականությունը
1	այծ	1869	45,22	2,33
2	մարդ	896	21,68	1,12
3	առիւծ	713	17,25	0,89
4	ցուլ	280	6,77	0,35
5	օձ	145	3,51	0,18
6	եղջերու	119	2,88	0,15
7	շուն	55	1,33	0,07
8	էշ	17	0,41	0,02
9	վարազ	8	0,19	0,009
10	ձի	6	0,15	0,007
11	նապաստակ	6	0,15	0,007
12	քոչուն	6	0,15	0,007
13	կատու	5	0,12	0,006
14	արջ	3	0,07	0,0037
15	մողես	3	0,07	0,0037
16	կոկորդիլոս	3	0,07	0,0037
16	խեցգետին	2	0,05	0,0025

Աղիւսեակում բերուած տուեալները բացայայտում են ժայռապատկերների երկու շատ ցայտուն առանձնայատկութիւն.

ա. ժայռապատկերներում կենդանական պատկերների մօտ կէսը պատկանում է այծին: Այծապատկերի յայտնուելու յաճախականութիւնը կազմում է 2.33/ժայռապատկեր, մարդունը՝ երկու անգամ պակաս (1.12/ժայռապատկեր): Միւս կենդանապատկերների յաճախականութիւնը մէկից փոքր է:

բ. Իրենց տարածուածութեամբ առաջին 5 տեղերում գրանուող կենդանիները (այծ, առիւծ, յովազ, ցուլ, օձ եւ եղջերու) ներկայացնում են Առաջաւոր Ասիայի պատմութեան հնագոյն շրջանի սրբազան կենդանիներին:

Ժայռապատկերների այս առանձնայատկութիւններն անշուշտ պատահականութեան արդիւնք չեն, այլ ունեն հոգեւոր-աշխարհընկալումային հիմք: Այժմ այդ հիմքը փորձենք պարզել հայերէնում յիշեալ կենդանիների անուններին համանուն հասկացութիւնների միջոցով (տես ստորեւ՝ աղիւսեակում):

Կենդանու անունումը	Կենդանու անուն- ման համանունը	Համանուն քառի իմաստը
դիգ (=այծ)	դիք	աստուած
խաշ (=այծ)	խաչ	աստծոյ նշան, սուրբ, կենաց ծառ
հօր (=այծ)	հայր (սեռ. հօր)	հայր
առեւծ	արեւ	արեւ, արեգակ
յովազ	հով	հովանի, հովանաւոր
ընջուղ (=ցուլ)	ընծուիլ	ծագել, բղխել, լոյս ցոլալ, ծլել, բուսնել
կով (=ցուլ, կով)	գով	ննարող, փառաբանութիւն
օձ	օծ	օծանել, օծելալ
եղն	եղ	ստեղծուած, գոյացած քան, գոյութիւն
շուն	սուն	սնուցանել, պահել

Համանունների այս շարքը, որն անշուշտ ամբողջականը չէ, գոյութիւն ունի միմիայն հայերէնում եւ աշխարհում չկայ որեւէ այլ լեզու, որը հնարաւորութիւն տար «հայր», «աստուած» եւ «խաչ» գաղափարներն արտայայտել այծի պատկերով, «լինել, գոյութիւն» գաղափարը՝ եղջերուի պատկերով, «փառաբանութիւն»՝ ցուլի պատկերով կամ «օծել, օծելալ» գաղափարը՝ օձի պատկերով:

Այս պարագայում, օրինակ, եթէ իրար կցենք օձի եւ այծի պատկերները, ապա այդ կցագրութիւնը, ըստ համանունութեան սկզբունքի, պիտի ընթերցել «Օծեալ Աստուած» եւ այս ընթերցումը միայն հայերէն լեզուամտածողութեան առանձնայատկութիւնն է, քանի որ դիգ-դիք եւ օձ-օծ համանունների զոյգը գոյութիւն ունի միայն հայերէնում: Ընդ որում, այծ-օձ կցագրութիւնը տարածուած է ժայռապատկերներում, ինչպէս նաեւ առկայ է Ք.ա. Գ.-Բ. հազարամեակների միջագետքեան կնիքների վրայ (տես նկար 3):



Նկար 3.

4. Ժայռապատկերներում այծի առանձնայատուկ դերից ելնելով, առաւել մանրամասն անդրադառնանք այծի մի քանի անուանումներին եւ դրանց համանուններին: Ինչպէս այծի պատկերներն են ժայռապատկերներում գերակշիռ թիւ կազմում, այնպէս էլ հայերէնում այծի անուանումների թիւն է (անցնում է 30-ից) անհամեմատ շատ ցանկացած այլ կենդանու անուանումների թիւից: Այծի այս բազմաքանակ անուանումներից առանձնացնենք այծ = ած, էծ, ագ: դիգ, արտի անուանումները:

ա. դիգ – այս անուանումը համանուն է «դիք» = «աստուած» բառին: Այսինքն, «աստուած» վերացական հասկացութիւնը պատկերադրութեան մէջ պէտք է արտայայտուէր դիգ = «այծ» առարկայական պատկերով: Համանունների այս զոյգը նկատուում է եւ շումերերէնում ու եգիպտերէնում: Շումերերէնում «աստուածութիւն» հասկացութիւնը գրւում է DIGIR, DIGER = «աստուածներ», իսկ բուն «աստուած» հասկացութիւնը գրւում է ILU = I-LU = I-UDU, որի գաղափարագիր բառացի իմաստն է «պաշտելի այծ, պաշտելի օդի»: Եգիպտոսում dg բառն արտայայտում էր Օսիրիսին հովանաւորող աստծոյ անունը: Այծ-աստուած համանունութեան այս օրինակը յայտնի է միայն այս երեք լեզուներում:

բ. այծ, ած, ագ – հայերէնում այծի այս անուանմանը համանուն է ագն=«ագղ, ցեղ» բառը, որից՝ «ագնիւ», «ագնուական» բառերը:¹¹ Եւ պատահական չէ, որ նախաքրիստոնէական շրջանում հայերը կրում էին «այծ» մականունը:¹² Եգիպտերէնում հիբրոգլիֆը բուն այծ իմաստից բացի ունի նաեւ «ագնուական, թագաւորական տիտղոս» իմաստը: Շումերերէնում «ագնուական» հասկացութիւնը գրւում է ^{dig} ZA.MAH = ^{dig} տիպը (ZA=անձ, մարդ, MAH=մակ, վերին, մեծ) եւ այստեղ օգտագործուել է «այծ» անուանման «դիգ» հոմանիշը:

Համանունների այս երկու շարքերը ցոյց են տալիս, որ համանունութեան սկզբունքի հիման վրայ այծի պատկերն արտայայտել է «աստուած» եւ «ագնուական, ագնուացեղ» հասկացութիւնները: Եթէ ժայռապատկերները նախորդել կամ ստեղծուել են շումերական եւ եգիպտական գրային համակարգերի ստեղծման ժամանակ, ապա ժայռապատկերներում եւս այծապատկերները պիտի արտայայտէին այդ իմաստները:

¹¹ Այստեղ է եւ ած=«այծ» եւ «ած» արմատից ածու=«ծիլ, ընծիւղ; ցեղ, տոհմ» բառերի համանունութիւնը:

¹² Փաւստոսի Բիւզանդացւոյ պատմութիւն Հայոց, չորրորդ գլուխ, Ժգ:

դ. արտի - այծի այս անունմանը համահունչ եզրիպտերէն art, arti բառը եւս կրում է «այծ, քարայծ» իմաստը: Միաժամանակ եզրիպտերէն բառը նշանակում է.

▪ «գրութիւն, վաւերագիր, աճանագրութիւն, գիրք, կաշուէ փաթեթ (իմա՝ մագաղաթ)»: Հայերէնում այս իմաստները կրող եւ արտի = «այծ» բառի համանունն է արծան = «փորագրեալ քարէ տախտակ, արձանագրութիւն» բառը (արձան բառի բարբառային տարբերակներն են արծան, արցան եւ սրանց նախաձեւը՝ արդան, արտան (տ > ծ, ց եւ դ > ձ, զ)):

▪ եզրիպտերէն artի բառի երկրորդ իմաստն է «կրակ, բոց»: Այս իմաստի հայերէն զուգահեռն է արտ > արծ = «տաք երկաթով փայտի վրայ նկարել (իմա՝ գրել), արծարծել = «մարող կրակը բորբոքել, բոցավառել, վառել»:

▪ artի բառին եզրիպտերէնում վերագրում է նաեւ «գերեզման» իմաստ: Այս իմաստի դեպքում հայերէն զուգահեռն է նոյն արձան բառը «գերեզմանաքար, մահարձան» իմաստով:

Արտի = artի բառի համանունների այս շարքը միայն հայերէնի ու եզրիպտերէնի առանձնապատկերներն է եւ նորից ցուցադրում է այծ եւ գիր հասկացութիւնների համանունութիւնը:

5. Այծ եւ գիր հասկացութիւնների կապը շատ ակնյայտ է արտայայտուած նաեւ ժայռապատկերներում: Նկար 4 բերուած ժայռապատկերների նմոշները ակնյայտ ցոյց են տալիս, որ այծի մէջքի գծի եւ եղջիւրների միջեւ ընկած տարածքը յաճախ օգտագործուել է որպէս իւրապատուկ գրատախտակ:



Նկար 4.

Ակնյայտ է, որ այծերի մէջքի եւ եղջիւրների արանքում գծագրուած վերացական նշանները գաղափարադրեր են, արտայայտում են այծի (իմա՝ աստծոյ) անունը, մականունը կամ որեւէ այլ բնութագիր եւ ենթակայ են վերծանման: Դիտարկենք երկու պարզ օրինակ:

Նկար 5-ում պատկերուած է այժ եւ նրա մէջքին կենտրոնում կէտ ունեցող շրջան: Այժի մէջքի շրջանը նոյնական է «արեւ», «արեւի աստուած» իմաստները կրող եգիպտական  հիերոգլիֆի հետ: Այստեղ այժը, որպէս դիզ, պիտի ընթերցենք դիք=«աստուած»: Արդիւնքում ունենում ենք «Արեւի Աստուած» ընթերցումը: Նկար 5-ի այծապատկերը ունի մի առանձնապատկութիւն եւս. ժայռապատկերի հեղինակը այժի եղջիւրների ծայրերը միացնելով ստացել է դրօշի պատկեր: Դրօշի խորհրդին կ'անդրադառնանք քիչ անց:



Նկար 5



Նկար 6



Նկար 7

Նկար 6-ում, ի տարբերութիւն նկար 5-ի, աւելացուած է առիւծի պատկեր: Առիւծ հիերոգլիֆը () ընթերցւում է Դ կամ ԴԿ եւ արտայայտում է առիւծ(ծ) կամ առիւա(ծ) հնագոյն ձեւի «ռ» բաղաձայնը կամ «ռ» բաղաձայնը եւ «ւ» կիսաձայնաւորը միասին: Առիւծի անուան նման ընթերցման հնարաւորութիւն են ընձեռնում միայն հայերէնը եւ եգիպտերէնը եւ միայն հայերէնում ու եգիպտերէնում են «առեւծ» եւ «արեւ» անուանումները համահունչ: Արեւի աստծոյ եգիպտերէն անուան մէջ որպէս  գաղափարագրի հնչիւնական լրացում գրւում են =Դ, ԴԿ եւ «արմուկն» =a հիերոգլիֆները (), ուղղահայեաց գծիկը նշանակում է, որ  հիերոգլիֆը գաղափարագիր է): Արեւի աստծոյ եգիպտերէն  գրելաձեւը նոյնական է նկար 6-ի ժայռապատկերային գրելաձեւին. այժը դիցանուան որոշիչն է, իսկ առիւծի պատկերը՝ «արեւ»  գաղափարագրի առեւ(ծ) հնչեցումը: Եգիպտերէնում, կախուած «առիւծ» հիերոգլիֆի Դ կամ ԴԿ ընթերցումից, արեւի աստծոյ անունը պիտի հնչեցուէր համապատասխանաբար Արա կամ Արեւ:

Այժմ վերադառնանք դրօշ գաղափարին: Նկար 7-ում րեւուած ժայռապատկերում մարդը գլխավերեւում պահում է երկար ձողի վրայ դրուած այծապատկեր: Սա թերեւս աշխարհի հընադոյն դրօշն է: Հեղինակը «դրօշ» գաղափարն ընդգծելու համար, ինչպէս նախորդ օրինակում, դրօշի պատկեր է կառուցել նաեւ այժի եղջիւրներից, իսկ դրօշի վրայ պատկերուած է մի

կէտանման շրջան: «Դրօշ» բառը հայերէնում ունի «աստծոյ պատկեր, կուռք, արձան» իմաստը: Դրօշի վերաբերեալ նոյն պատկերացումներն են ունեցել եւ եգիպտացիները. նրանք դրօշի պատկերին (), որպէս հիերոգլիֆի, վերագրել են «աստուած» իմաստ եւ օգտագործում էին որպէս զիջանունների որոշիչ: Այսպիսով այս օրինակում «աստուած» գաղափարն արտայայտուած է եռակի. առաջինը բուն այծի պատկերն է, երկրորդը՝ այծի պատկերը ձողի վրայ բարձրացուած, որպէս արձան, դրօշ, անդրի, կուռք եւ վերջապէս երրորդը՝ այծի եղջիւրներով կազմուած բուն դրօշը: Դրօշի վրայ պատկերուած հոծ շրջանը ունի «տէր» իմաստը. այդպէս է չումերական պատկերագրութեան մէջ: Արդիւնքում ողջ պատկերն արտայայտել է «Տէր Աստուած» իմաստը: Աւելացնենք նաեւ, որ այծապատկեր կուռք-դրօշներ յաճախ են հանդիպում Ուխտասարի ժայռապատկերներում (տես նկար 8):



Նկար 8.



Նկար 9.

Հաւանաբար ժայռագրութեանը զուգահեռ գոյութիւն է ունեցել նաեւ մշակուած կաշուի՝ մագաղաթի վրայ գրելու սովորոյթ: Ընդ որում, ինչպէս ցոյց են տալիս եղջիւրադրօշ պատկերները, մշակուած կաշին հաւանաբար ձգուել է զոհարեւում այծի եղջիւրներին եւ այդ դրօշի վրայ գրուել է զոհարեւութեան կամ այլ պաշտամունքային բանաձեւ: Գոյութիւն են ունեցել նաեւ այծի քարակոփ դրօշ-կուռքեր՝ արձաններ: Ք.ա. թ. հազարամեակով թուագրուող այծի գլխի մի քարէ սխեմատիկ արձան-կուռք է յայտնաբերուել Էյնանում (տես նկար 9): Մասնագէտների կողմից առայսօր այն մեկնարանում է որպէս մարդու գլուխ:¹³ Հայերէնի ներսի համանունների բացայայտումը եւ եգիպտերէնում նրանց համահունչ ու նոյնիմաստ զուգահեռների առկայութիւնը, ինչպէս նաեւ ժայռապատկերների մի քանի օրինակների քննարկման ար-

¹³ J. Mellaart, *Earliest civilizations of the Near East*, London, 1965.

դիւնքները թոյլ են տալիս ձեւակերպել երկու նախնական եզրակացութիւն.

ա. Ուխտասար-Ջերմաճոր տարածաշրջանի ժայռապատկերները ստեղծողներն ունեցել են Հայերէն լեզուամտածողութիւն:

բ. Հայերէնն ու եգիպտերէնը եթէ ոչ նոյնական, ապա առնուազն նոյն բնից անջատուած քոյր լեզուներ են:

6. Այս եզրակացութիւնների ենթատեքստում համեմատենք Հայերէնում եւ եգիպտերէնում այծի անուանումները:

Եգիպտերէն անուանումը	Եգիպտերէն անուանման իմաստը	Հայերէն գուգահետը	Հայերէն քառի իմաստը
at	այծ	ած, էծ	այծ ($t > d$)
art, arti	այծ, բարայծ, խոյ	արտի	վայրի այծ, ոչխար
awt	այծի եւ ոչխարների հօտ	հաւտ	այծերի ու ոչխարների հօտ
iAw.t	այծեր եւ ոչխարներ	հաւտ	այծերի ու ոչխարների հօտ
wa.ti	այծի տեսակ	գտի	այծ
qA	այծ	բաղ	արու այծ
anx, nx	այծ	նոխագ	արու այծ
Hqs	վայրի այծ	հաբիս	այծերին եւ ոչխարներին էջելու ձայնարկութիւն

Այծի անուանումների այս ընդհանրութիւնը կարելի է նրանով, որ մինչ Նեղոսի հովիտը իւրացնող «գինաստիական ուսայի» յայտնուելը, Եգիպտոսում չի եղել այծ՝ ոչ ընտանի, ոչ վայրի: Ընտանի այծի նախնին բեզուարեան վայրի այծն է, որի հայրենիքը եղել է Հայկական լեռնաշխարհը եւ նրան յարակից լեռնային շրջանները: Հնագիտական տուեալները փաստում են, որ գարգացման բարձր փուլում գտնուող անասնապահութիւնը եւ ընտանի կենդանիներին իրենց հետ բերում են Նեղոսի հովտում եգիպտական մշակոյթը հիմնողները:¹⁴ Ակնյայտ է, որ եկուորները պիտի բերէին ու պահպանէին այծի այն անուանումները, որոնք իրենք գործածում էին նախահայրենիքում: Այծի անուանումների այս ընդհանրութիւնից զատ կայ եւս մի հետա-

¹⁴ W.B. Emery, Archaic Egypt, Edinburg, 1961.

քըրքր կապ հայերէնի եւ եգիպտերէնի միջեւ: Եգիպտերէնում այծի անուանումների համար որպէս որոշիչ օգտագործում էին ինչպէս այծապատկեր հիերոգլիֆները (, , ), այնպէս էլ «կաշի» նշանակող հիերոգլիֆը (, ): Օրինակ՝ qA =   = քաղ¹⁵, awt =   կամ   = հօտ: Նման երեւոյթ կարող էր տեղի ունենալ միայն այն լեզւում, որում այծի եւ նրա կաշիի անուանումները նոյնական են: Այս պայմանին եւս բաւարարում է հայերէնը (տես ստորեւ աղիւսեակը):

Այծի անուանումը հայերէնում	Այծի կաշուի անուանումը հայերէնում
այծ	այծենի
մաշ	մաշկ
խաշմ	կաշի
բաղ	խաղ

7. Ժայռապատկերները հայկական մշակոյթին են կապւում ոչ միայն համանունների սկզբունքի հիման վրայ կատարուած բացայայտումների միջոցով: Ժայռապատկերներում առկայ են խորհրդանշաններ, որոնք հազարամեակներ շարունակ պահպանուելով, օգտագործուել են միջնադարեան նշանագրերի համակարգում, շարունակուել են օգտագործուել եւ մեր օրերում ու իւրաքանչեւ են միայն հայկական մշակոյթին: Այդպիսի խորհրդանշաններից է «պատիւ» նշանը (—), որը զբւում էր Աստծոյ անունների յապաւուած գրելաձեւերի վրայ: Նոյն նշանը առկայ է եւ ժայռապատկերներում եւ զբւում է մարդակերպ աստուածների գլխավերեւում (նկար 10):



Նկար 10.

¹⁵ Այծի «քաղ» անուանումը պիտի հնչեցուէր «անդղ» հիերոգլիֆի «աղ» ընթերցումով:

Դ. ՈՒԽՏԱՍԱՐ ԶԵՐՄԱՋՈՐԻ ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԹՈՒԱԳՐՈՒՄԸ

1. Ժայռապատկերների հետազոտման առաջնային խնդիրներին մէկը նրանց ժամանակագրումն է: Ժայռապատկերների ստեղծման ժամանակաշրջանի համար տարբեր հեղինակների կողմից բերուող թուերն ընդգրկում են Ք.ա. Ը-Ա. հազարամեակները: Սակայն բոլոր թուերը բերւում են առանց հիմնաւորման եւ կրում են սուբյեկտիվ բնոյթ: Դրանցից թերեւս առանձնանում է ժայռապատկերների հետազոտման ասպարէզում մեծ վաստակ ունեցող գիտնական Յար. Մարտիրոսեանի մտեցումը: Նա ժայռապատկերները դասակարգում էր ըստ կատարման ոճերի եւ տեխնիկայի ու առանձնացուած ամէն ոճական խմբի համար տալիս նրանց ստեղծման ժամանակաշրջանը:¹⁶ Առանձնացուած 6 ոճական խմբերի ժայռապատկերները հեղինակը թուագրում էր Ք.ա. Ե-Ա. հազարամեակներով: Իրականում հեղինակի առանձնացրած պատկերները շատ դժգոյքով ոչ թէ տարբեր ժամանակաշրջաններում նոյն պատկերի գծագրման տարբեր ոճեր են, այլ պարզապէս տարբեր պատկերներ ու խորհրդանշաններ: Յաճախ հեղինակի կողմից Ք.ա. Ե. հազարամեակին վերագրուող պատկերը նոյն ժայռապատկերում հանդէս է գալիս Ք.ա. Ա. հազարամեակին վերագրուած պատկերի հետ: Յար. Մարտիրոսեանը մեծ վաստակ ունի յատկապէս ժայռապատկերների պաշտամունքային էութեան բացայայտման գործում:¹⁷ Զարմանալի է, որ հեղինակն իր այդ բացայայտումները չի օգտագործել ժայռապատկերների թուագրման ասպարէզում, ինչն աւելի օբյեկտիվ ու հաւաստի արդիւնքների կը յանգեցնէր:

2. Ժայռապատկերների թուագրումը հնարաւոր է կատարել երկու ճանապարհով.

ա. ժայռապատկերներին ուղեկցող հնագիտական նիւթի միջոցով (փորագրման գործիքներ, ժայռապատկերներին կից դամբարաններ, բնակավայրեր եւ այլն):

Սակայն առայժմ այդպիսի հնագիտական նիւթը բացակայում է եւ սոյն աշխատանքում ժայռապատկերների թուագրման համար ընտրել ենք այլ ճանապարհ:

¹⁶ 3. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ, Գեղամայ լեռների ժայռապատկերները, Երեւան, 1981:

¹⁷ 3. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ, Գիտութիւնն սկսում է նախնադարում, Երեւան, 1978:

բ. ժայռապատկերները թուազրել այն առարկաների պատկերներով (գործիքներ, զենքեր, խեցեղէն, կենդանիներ, պաշտամունքային խորհրդանշաններ եւ այլն), որոնց հնարաւոր է համեմատել ու նույնացնել այլ վայրերից պեղուած եւ թուազրուած առարկաների հետ:

Նախ անդրադառնանք ժայռապատկերներում առկայ գինատեսակներին, աչքի առաջ ունենալով այն փաստը, որ ամբողջապէս մետաղէ կամ մետաղեայ մասեր պարունակող զենքերը Առաջաւոր Ասիայում տարածում են ստացել վաղ բրոնզի դարում (Ք.ա. Դ. հազարամեակի երկրորդ կէս-Գ. հազարամեակ):¹⁸

3. Ստորեւ աղիւսեակի տեսքով բերուած են վերոյիշեալ 802 ժայռապատկերներում պատկերուած գինատեսակների տիպական նմոշները (առաջին տող), տուեալ գինատեսակին համապատասխան եզրիպտական հիերոգլիֆը (երկրորդ տող), եւ տուեալ գինատեսակի ընդհանուր քանակը:

քիր, մահակ	նիզակ	մական	մետ ու աղեղ	կացին	դանակ, դաշույն	վահան
73	9	8	58	5	6	29

Եթէ էլնենք բերուած վիճակագրութիւնից, ապա ժայռապատկերների փորագրման ժամանակ ամենագործածական գինատեսակներն էին բիրը, ապա նետ-աղեղն ու վահանը: Սակայն

¹⁸ Տե՛ս՝ Ա. ՓԻԼԻՊՈՍԵԱՆ, Հիմ արեւելի շրջանակաւոր դաստակով դաշիւններն ու արերը, Երեւան, 1999, եւ այնտեղ բերուած գրականութիւնը:

ժայռապատկերներում այս կամ այն զինատեսակի յայտնուելու յաճախութիւնը իրականում կարող է կախուած լինել համանունութեան սկզբունքից բխող նրա գաղափարազիր խմաստի գործածման յաճախութիւնից եւ ոչ տուեալ ժամանակաշրջանում զինատեսակի ունեցած իրական տարածուածութիւնից:

Զինատեսակների ծակող եւ կտրող մասերի (տէգ, նետազըլ-խիկ, դանակի շեղը, կացին) մանրակրկիտ հետազոտութիւնը եւ քարեդարեան ու բրոնզեդարեան մետաղական նմոշների հետ համեմատութիւնը ցոյց է տալիս, որ յիշեալ մասերը մետաղական չեն: Անշուշտ մօտեցման մէջ կայ որոշ սուբեկտիւութիւն, սակայն ելնելով այն փաստից, որ ժայռապատկերների գծագրման ուճը խիստ ուշալիստական է, կարծում ենք յիշեալ առարկաների պատկերներից արուած մեր եզրակացութիւնը ճիշտ է: Մեր եզրակացութեան օգտին է վկայում մի այլ փաստ. նետ ու աղեղի 58 պատկերներից միայն 6 դէպքում է նետը պատկերուած սլաքաձեւ նետազլխիկով: Այս փաստն առաւել պիտի համապատասխանի ուշ պալեոլիթի շրջանին, երբ սրածայր փայտէ կամ եղեգնեայ նետերին փոխարինելու էին գալիս քարէ էլիպսաձեւ կամ սլաքաձեւ գլխիկներով նետերը: Եթէ նոյնիսկ ենթադրենք, որ այդ նետազլխիկները մետաղական էին, ապա դա կարող էր համապատասխանել վաղ բրոնզի դարի սկզբնական շրջանին, երբ մետաղական գէնքը «թանկ հաճոյք» էր: Այս վիճաբարոյց պարագայում կարող ենք միայն պնդել, որ ժայռապատկերները ստեղծուել են առնուազն նախքան Ք.ա. 3000թ:

4. Ժայռապատկերներում առկայ զինատեսակները քարից լինելու տեսակէտն աւելի է ամրապնդուում եւ ժայռապատկերների ստեղծման ժամանակն աւելի հեռուն է գնում, երբ ուսումնասիրում ենք խեցեղէնի առկայութիւնը: Եզրիպտական հիերոգլիֆների համակարգում կան քարէ կամ կաւէ ամանների տարբեր տեսակներ պատկերող 26 հիմնական հիերոգլիֆներ, որոնք ունեն գծագրման հարիւրից աւել տարբերակներ: Որակապէս նոյն պատկերն է շումերական պատկերազրութեան մէջ: Այս աւանդոյթը շարունակուել է աւելի ուշ շրջանում եւս (օրինակ՝ Ք.ա. Բ. հազարամեակի խեթա-լուվիական հիերոգլիֆներում): Հետեւաբար պէտք է ենթադրել, որ ժայռապատկերները եւս, որպէս գաղափարազիր գրային համակարգ, պիտի իր մէջ առնէր նաեւ խեցեղէն տարբեր ամանների պատկերներ: Իրականում Ուխտասար-Ջերմաձորի ժայռապատկերներում գրանք բացակայում են: Մի-

այն մի խեցեղէն անօթ կայ Գեղամայ լեռների հրատարակուած ժայռապատկերների մէջ (տես նկար 11)¹⁹:



Նկար 11.

Այս դէպքում մնում է եզրակացնել, որ Ուխտասար-Ջերմաձորի ժայռապատկերները ստեղծուել են առնուազն Ք.ա. 7000-ից՝ խեցեղէն նեոլիթի սկզբնաւորումից առաջ:

5. Ուխտասար-Ջերմաձորի ժայռապատկերների թուագրման համար ընտրուած յաջորդ առանձնայատկութիւնը նաւերի ու նաւակների առկայութիւնն է ժայռապատկերներում: Հրատարակուած 802 ժայռապատկերներում առկայ են տասից աւել նաւերի ու նաւակների պատկերներ (տես նկար 12, 1-4 պատկերները: Բոլոր պատկերները բերուած են ժայռապատկերային նշանների եւ եզրպտական հիերոգլիֆների համեմատական աղիւսեակում): Մեր կողմից 2006թ. ամռանը դէպի Ուխտասար կազմակերպուած արշաւախմբի բերած մօտ 400 ժայռապատկերների ֆոտոպատճէններում եւս կան նաւերի ու նաւակների շատ պատկերներ (տես նկար 12, 5-10 պատկերներ):



Նկար 12.

Ինչպէս տեսնում ենք, ժայռապատկերները ստեղծողները յայտնադործել ու կիրառում են նաեւ քամու ուժն օգտագործելու միջոցը՝ առադաստը: Մի առանձնայատկութիւն եւս. 10-րդ պատկերում առադաստանաւը պատկերուած է այծի եղջիրների

¹⁹ ՅԱՐ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ, Գեղամայ լեռների ժայռապատկերները, Երեւան, 1981:

տակ, ինչը նշանակում է, որ այդ ժամանակ արդեն ձեւաւորուել էր «աստուածային նաւ», «երկնային նաւ» գաղափարը:

Տեսանելի պատմական ժամանակաշրջանում Սիւնիքի աշխարհագրական իրավիճակը (սակաւաջուր արագահոս գետեր, հրաբխային խառնարանների փոքր լճեր) անշուշտ պիտանի էր նաւարկութեան համար: Աւելին, նաւերի պատկերներից երեւում է, որ դրանք փայտէ, բարձրաքիթ եւ խորը թաղուածք ունեցող նաւեր են, որոնցով կարելի է նաւարկել միայն մեծ եւ խորը ջրաւազաններում (ծով կամ մեծ լիճ): Միջանկեալ նշենք, որ Ուղտասար-Ջերմաձորի ժայռապատկերների բարձրաքիթ նաւերի պատկերները կրկնում են նաեւ Նեղոսի եւ Կարմիր ծովի միջեւ ընկած անապատում յայտնաբերուած ժայռապատկերներում (տես նկար 13)²⁰:



Նկար 13.

Այսպիսի նաւերով են եգիպտական քաղաքակրթութիւնը հիմնողները կտրել Կարմիր ծովը եւ թափանցել Նեղոսի հովիտ:

Քանի որ պատմական Սիւնիքը նաւարկելի ջրաւազաններ չունէր, ուրեմն նաւարկելու հնարաւորութիւնը պէտք է փնտրել նախապատմական այն ժամանակներում, երբ Սիւնիք լեռնակղզին միաժամանակ ծովային կղզի կամ թերակղզի է եղել: Ժամանակակից երկրաբանական տուեալների համաձայն, Հայկական լեռնաշխարհում, մասնաւորապէս Սիւնիքում, հիմնական լեռնակազմական պրոցեսներն աւարտուել են միջին պլեյստոցենում (420-100 հազար տարի առաջ) եւ ձեւաւորուել է 3000-4000մ բարձրութեամբ լեռնագագաթներ ունեցող լեռնաշխարհ:²¹ Ակնյայտ է, որ ժայռապատկերները պիտի գծագրուէին լեռնակազմական պրո-

²⁰ Д. Рол, Генезис цивилизации, Москва, Эксмо, 2003.

²¹ Այս եւ ստորեւ բերուող երկրաբանական տուեալները ըստ՝ Ю. Сая-джан, Геология, стратиграфия и палеогеография верхнего миоцена, плиоцена и четвертичного периода Армении, Автореферат докторской диссертации, Москва, 2006; Ա. ՎԵՆՈՒՆԻ, Հայկական լեռնաշխարհի երկրաբանութիւնը եւ ընդերքի հարստութիւնները, Երեւան, 2001; Геология Армянской ССР, т. 1, Геоморфология, Ереван, 1966.

ցեսների աւարտից յետոյ: Միջին պլեյստոցենում առաջանում են նաեւ Շիրակի, Արարատեան դաշտավայրի եւ Անդեղակոթի լճերի համակարգը: Կարս-Շիրակի սարահարթը եւ Արարատեան ու Նախիջեւանի դաշտավայրերը ջրածածկ արած պլեյստոցենեան խոշոր լիճը Սիւնիքի ավերը ողողում էր արեւմուտքից ու հարաւից: Այս խոշոր լիճը ցամաքում է հոլոցենի սկզբում (Ք.ա. թ. հազարամեակ)²²: Արարատեան եւ Նախիջեւանի դաշտավայրերի ցածրադիր մասերը հաւանաբար վերջնականապէս ցամաքել են Ք.ա. Ը. հազարամեակում, քանի որ այդ ժամանակ են առաջանում Արարատեան դաշտավայրի առաջին բնակավայրերը²³:

Հետեւաբար պիտի ենթադրել, որ Ք.ա. թ.թ. հազարամեակներում յիշեալ լիճը դեռեւս պիտի նաւարկելի լինէր: Այս փաստից էլ բխում է, որ Ուխտասար-Ջերմաձորի ժայռապատկերները պիտի ստեղծուած լինեն Ք.ա. թ.թ. հազարամեակներում կամ դրանից առաջ: Այստեղ տեղին է աւելացնել, որ մօտ 70-40 հազար տարի առաջ տեղի է ունենում Կասպից ծովի խոշորագոյն տրանսգրեսիան, որի ժամանակ Կասպից ծովի ջրերը հասնում են լեռնային Արցախի մատուցներին:²⁴ Այդ ժամանակահատուածում Փոքր Կովկասը (Սիւնիքից մինչեւ Զաւախքի լեռներ) դառնում է բազմաթիւ ծովախորշերով կտրտուած թերակղզի (կամ կղզի), որը ցամաքի նեղ շերտով մայրցամաքի հետ կապուած էր միայն հիւսիս-արեւելքում²⁵:

²² Խեցեղործութեան համեմատաբար ուշ (ք.ա. VIII-VII հազարամեակներ) ի յայտ գալը հաւանաբար պայմանաւորուած էր նրանով, որ նէոլիթեան քաղաքակրթութեան հեղինակները՝ երկրագործական եւ անասնապահական մշակոյթ ստեղծողները, ապրում էին բարձր լեռնային շրջաններում, որտեղ կաւը գործնականում բացակայում էր: Լճերի նուագող ջրերի հետեւից լեռներից իջնող մարդիկ պիտի յայտնաբերէին ցամաքած ջրուականի տեղում կուտակուած կաւային նստուածքներն ու յայտնագործէին կաւի յատկութիւններն ու խեցեղործութիւնը:

²³ Ս. ՍԱՐԴԱՐԵԱՆ, Նախնադարեան հասարակութիւնը Հայաստանում, Երեւան, 1967: Ս. ՍԱՐԴԱՐԵԱՆ, Հայաստանը Բաղաձակրութեան օրրան, Երեւան, 2004:

²⁴ С.И. Варушенко, А.Н. Варушенко, Р.К. Клиге, Изменение режима Каспийского моря и безсточных водоемов в палеовремени, Москва, 1987.

²⁵ Այդ վիճակում պիտի յայտնուէր Փոքր Կովկասի ողջ լեռնաշխարհը եւ ամենայն հաւանականութեամբ հէնց այդ ժամանակներում է Հայաստանի վերաբերեալ ձեւաւորուել «Արեւելքի երկիր», «Արեւածագի երկիր» եւ նման միւս բնորոշումները: Մովսէսով շրջապատուած Փոքր Կովկասը նաեւ կարող

Կենդանու անուանումը	Կենդանու պատկերը ժայռապատկերներում
Ուղտ	
Փիղ	
Գետաձի (?)	
Խոյացուլ (?)	
Ռեզեդիւր	
(?)	
Եղջերուներ, այծեամներ	
Ընձուխտ	
(?)	
Փոկ (?)	


Նկար 14.

էր լինել շումերական արձանագրութիւնների առասպելական Դիւմուն երկիրը, որտեղ ապրում էր Ջրհեղեղից փրկուած եւ աստուածների կողմից շնորհի արժանացած Զիււսուղրան: Սեպագիր արձանագրութիւններում Դիւմունը գրւում էր NI-TUKKI, որի NI ընթերցուած սեպն ունի նաեւ IA3 ընթերցում (ինչպէս սկզբում dHA-NI ընթերցուած դիցանունը յետագայում ընթերցուէց dHA-IA3 = «Աստուած Հայ» ձեւով): Այս գէպքում NI-TUKKI ընթերցման փոխարէն կ'ունենանք IA3-TUKKI = Յատուկ երկիր: «Յատուկ» բառը հայերէնում ունի հէնց «գատուած, կողիացած» իմաստ: Հնարարութիւն է այդ ժամանակներից եկող վկայութիւն է նաեւ Խաղխաղ (Ներկայիս Ղազախ) տեղանունը, որը նշանակում է «ծովի խութք, ժայռակղզի»:

6. Ժայռապատկերների թուագրման հնարաւորութիւնն ըն-
ձեռնող յաջորդ փաստը չորրորդական երկրաբանական դարաշրը-
ջանին պատկանող բրածոյ կաթնասունների պատկերների առկա-
յութիւնն է ժայռապատկերներում: Հայաստանի Հանրապետու-
թեան տարածքից յայտնաբերուել են փղի, ռնգեղջիւրի, ձիու,
ուղտի, ցլի, եղջերուի բրածոյ մնացորդներ²⁶: Ըստ պալեոկենսա-
բանների, երկրագնդի մասշտաբով վերջին գլոբալ էկոլոգիական
ճգնաժամը տեղի է ունեցել պլեյստոցենի եւ հոլոցենի սահմանա-
գլխին (12-13 հազար տարի առաջ)²⁷: Այդ ճգնաժամի ընթաց-
քում բնաջնջուեցին հիմնականում խոշոր կաթնասունները, ո-
րոնց ներկայացուցիչներին տեսնում ենք Ուխտասար-Ջերմաձորի
ժայռապատկերներում (տես նկար 14):

Այս փաստը եւս ժայռապատկերների ստեղծման ժամանա-
կաշրջանի ստորին շեմի համար տալիս է Բ.ա. ԺԲ-ԺԱ. հազարա-
մեակները:

Ուխտասար-Ջերմաձորի ժայռապատկերների բրածոյ կեն-
դանիների պատկերները կարծես հնարաւորութիւն են տալիս
լուծել եգիպտագիտութեան եւս մի առեղծուած: Եգիպտական
պատկերադրութեան մէջ Սէթ աստուածը ներկայացուած է մի
կենդանու պատկերով, որի ինչ եւ որտեղից լինելը մինչ այժմ
մնում է անյայտ: Սակայն այժմ կարող ենք ասել, որ Սէթի կեն-
դանին ծանօթ էր Ուխտասար-Ջերմաձորի ժայռապատկերները
փորագրողներին: Ստորեւ այդ կենդանու պատկերները բերուած
են Սէթի անուան գաղափարագիր հիերոգլիֆների համեմատու-
թեամբ:

Ուխտասար- Ջերմաձորի ժայռապատկերներ		
Եգիպտական հիերոգլիֆներ		

26 Л. Авакян, Четвертичные ископаемые млекопитающие Армении, Ереван, 1959;
М. Абрамян, Л. Авакян, Н. Азарян и др., Атлас ископаемой фауны Армянской
ССР, Ереван, 1974.

27 Палеолит СССР, Москва, 1984; Громов В.И. Палеонтологическое и археологи-
ческое обоснование стратиграфии континентальных отложений четвертичного
периода на территории СССР, Москва, 1948.

իր կերպարանքով շուն եւ միաժամանակ էլ յիշեցնող այս կենդանին եւս հաւանաբար ոչնչացել է հոլոցենի սկզբնական շրջանում, բայց Ք.ա. 2. հազարամեակի վերջից ոչ շուտ, քանզի հաւանաբար այդ ժամանակ է նրա պատկերը տարուել Եգիպտոս:

7. Բերուած օրինակների քննութեան արդիւնքներից հետեւում է, որ Ուխտասար-Ձերմաճորի ժայռապատկերները ստեղծուել են մինչ Ք.ա. ԺԲ-ԺԱ. հազարամեակները: Այժմ փորձենք որոշել ժայռապատկերների ստեղծման ժամանակի վերին սահմանը: Ըստ երկրաբանների կատարած հետազոտութիւնների, Հայկական լեռնաշխարհում, այդ թւում Սիւնիքում, լեռնագագաթների սառցապատում է եղել վերջին՝ Վիւրմեան սառցապատման III փուլում (34000-18000 տարի առաջ): Վիւրմ-III սառցապատումն իր մաքսիմումին է հասել ~25000 տարի առաջ (ըստ Մ. Միլանկովիչի): Սառցապատման մաքսիմումի ժամանակ Փոքր Կովկասեան լեռնաշխարհում (այդ թւում Սիւնիքում) սառցադաշտերն իջել են մինչեւ 2500-2700մ բարձրութիւնները: Հետեւաբար այն տարածքները, որտեղ այսօր ժայռապատկերներ են յայտնաբերուում (2500-3500մ), այդ ժամանակ գտնուում էին սառցադաշտերի տակ: Սառցապատման վերջին՝ նուազման փուլում լեռնալանջերով ցած սահող սառցադաշտերը մեխանիկական հետքեր են թողել իրենց տակ գտնուող ժայռաքեկորների վրայ: Նրկար 15-ում բերուած ժայռապատկերները ցոյց են տալիս, որ ժայռապատկերները փորագրուել են մեխանիկական ազդեցութեան հետեւանքով առաջացած եւ աւելի հին ծագում ունեցող ակօսների վրայ:



Նկար 15.

Ենթադրուում է, որ Սիւնիքի լեռնագագաթները սառցապատումից սկսել ազատուել են ~20000-18000 տարի առաջ: Անշուշտ ժայռապատկերները պիտի փորագրուէին այդ ժամանակաշրջանից յետոյ:

Այս փաստը համադրելով նախորդ կէտերում բերուած տուեալների հետ, յանգում ենք այն եզրակացութեան, որ Ուխտասար-Ջերմաձորի ժայռապատկերները ստեղծուել են Ք.ա. ԺԺ-ԺԱ. հազարամեակներում: Այս արդիւնքն անշուշտ հնագիտական ուղղակի փաստերով հիմնաւորման կարիք ունի: Կարծում ենք, նման փաստերը հնարաւոր է ձեռք բերել, եթէ նպատակային պեղումներ կատարուեն Սիւնիքի եւ Գեղարքունիքի ժայռապատկերների կուտակման շրջաններում, ենթադրելով, որ ժայռապատկերները փորագրողների բնակավայրերը կարող էին լինել 1500-1700մ բարձրութիւններից (վերին պլեյստոցենի ծովափնեայ շրջան) մինչեւ 3000-3300մ բարձրութիւնները (ժայռապատկերների կուտակման հիմնական բարձրութիւնները):

8. Ժայռապատկերները բազմաթիւ այլ տուեալներ են հաղորդում ժամանակաշրջանի տնտեսութեան եւ պաշտամունքի վերաբերեալ: Այս աշխատանքի համատեքստում այդ տուեալներից կարեւորում են.

ա. եզներին լծուած արօրների եւ քառանիւ կամ երկանիւ սայլերի պատկերները (տես նկար 16)



Նկար 16.²⁸

Ժայռապատկերներում լծկան եզների, արօրների ու անուաւոր սայլերի առկայութիւնը ենթադրում է զարգացած երկրագործութեան, անասնապահութեան եւ արհեստների զոյուցիւն: Անշուշտ Ք.ա. ԺԺ-ԺԱ. հազարամեակներից սայլի եւ արօրի փայտէ մասերը մեզ չեն հասնի, սակայն կան որոշ հնագիտական տուեալներ, որոնք կարող են հիմնաւորում հանդիսանալ մեր թուազրման համար:²⁹ Այդ տուեալներից կարեւոր են Զաւի

²⁸ Արօրի պատկերը փերցուած է մեր աշաւախմբի Փոստպատճէններից եւ բացակայում է «Սիւնիքի ժայռապատկերները» աշխատութեան մէջ:

²⁹ Հնագիտական տուեալները բերում են բոտ CANew նախագծի: <http://www.canew.org/download.html>

Չեմի (Ք.ա. ժ.թ.-ժ.Ա. հազարամեակներ, Միջագետք Հայոց) եւ Հալ-լան Չեմի (Ք.ա. ժ.Ա.-ժ. հազարամեակներ, Կորդուք) հնավայրերից յայտնաբերուած ձեռքի երկանաքարերը: Ձեռքի աղացների այս հնագոյն նմուշները Ք.ա. ժ.թ.-ժ. հազարամեակների մասին երկու կարեւոր վկայութիւն են տալիս. նախ՝ աղացի առկայութիւնը ենթադրում է արդիւնաւէտ երկրագործութեան առկայութիւն եւ երկրորդ՝ որ արդէն յայտնագործուած էր անիւը եւ կարող էր լինել անիւաւոր սայլ:

Ընտանի խոշոր եղջերաւոր անասունները յայտնի են Զալ-ոնու-Բ հնավայրից (Ք.ա. թ. հազարամեակ, Աղծնիք): Այս փաս-տը 2-3 հազարամեակներով ուշ է ժայռապատկերների մեր թուա-գրման ժամանակաշրջանից: Սակայն այս ժամանակաշրջանը խզումը կարծում ենք թուացեալ է եւ պայմանաւորուած է հետեւեալ սուբյեկտիւ պատճառներով.

■ նշուած բոլոր հնավայրերը պատմական Հայաստանի սահմանային շրջաններում են: Եթէ Հայաստանը մարդագոյաց-ման եւ քաղաքակրթութեան ծագման օջախ է³⁰, ապա քաղաքա-կրթութեան ծագումնաբանական հարցերի քննութեան ժամանակ պիտի յենուել նրա կենտրոնական շրջաններից յայտնի տուեալնե-րի վրայ:

■ սակայն, պատմական Հայաստանի կենտրոնական աշ-խարհների (Բարձր Հայք, Տուրուբերան, Վասպուրական, Այրա-րատ, Սիւնիք) պալեոլիթի ժամանակաշրջանը գործնականում ու-սումնասիրուած չէ:³¹

Ուղիղ 33 տարի առաջ Յար. Մարտիրոսեանը ելնելով ժայ-ռապատկերների հետազոտման արդիւնքում իր կողմից բացայայ-տուած փաստերից եւ հաշուի առնելով Հայաստանի անընդմէջ բնակեցուածութիւնը սկսած ստորին պալեոլիթից, նախագծում է պալեոլիթ-նեոլիթեան դարաշրջանների հետազոտման առաջնա-հերթ ուղղութիւնները: Հեղինակը միաժամանակ նշում է, որ հնագիտութեան ինստիտուտը չունի այդ դարաշրջանների պրոբ-լեմները հետազոտելու ունակ գիտական խմբեր եւ աւելացնում, որ «Այս պրոբլեմների լուծման համար անհրաժեշտ է պատրաս-

³⁰ ՅԱՐ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ, Հայաստանի հնագոյն մշակոյթի ուսումնասիրու-թիւնը եւ նրա զարգացման հեռանկարները, Լրարբ. հասարակական գի-տութիւններ, 7 (379), 1974, էջ 25:

³¹ Նոյն տեղում:

տեղ բազմակողմանի զարգացած հնագէտներ՝ ընդգրկելով չորրորդականի երկրաբանութեան եւ աշխարհագրութեան, բնական եւ տեխնիկական գիտութիւնների բազմաթիւ այլ մասնագէտների»³²։ Յաւօք սրտի, անցած 33 տարիների ընթացքում անուանի գիտնականի ծրագրային յօդուածից ոչինչ իրականութիւն չդարձուեց։

բ. Ժայռապատկերներում առկայ եւ մեզ հետաքրքրող յաջորդ փաստը շինութիւնների յատակագծերն են։ Ուխտասար-Ջերմաձորի հրատարակուած 802 ժայռապատկերներում կան շինութիւնների 12 ուղղանկիւն յատակագծեր։ Ուղղանկիւն յատակագծով հնագոյն շինութիւններ են համարուած Մուրեյբետում (հիւսիսային Սիրիա, Ք.ա. ԺԱ-Ը. հազարամեակներ) յայտնաբերուածները³³։ Մուրեյբետի սկզբնական ժամանակաշրջանը (Ք.ա. ԺԱ. հազ.) համընկնում է ժայռապատկերների թուագրման ստորին շեմի հետ։ Մեր կարծիքով ժայռապատկերների 12 յատակագծերում տաճարներ են պատկերուած։ Փորձենք դա հիմնաւորել մի յատակագծի օրինակով (տես նկար 17)։ Շինութիւնը բաժանուած է 4 մասերի, որոնցից վերին ձախ բաժ-



Նկար 17.

նում եգիպտական «ջրաւազան» հիերոգլիֆի (□) վրայ դրօշ = «աստուած, կուռք» հիերոգլիֆն է (𐎗), իսկ նրա գլխին՝ «ջուր» հիերոգլիֆը (𐎎)։ Կողքի՝ աջ բաժնում պատկերուած է «աղբիւր, աղուռք, ջրհոր» հիերոգլիֆը (𐎑)։ Անկասկած յատակագծում ներկայացուել է ջրի պաշտամունքի տաճար, որը կառուցուած էր ջրի աղուռքի վրայ։ Տաճարի 4 մասերին համապատասխան պատկերուած են 4 կենդանիներ (2 առիւծ, այժ եւ յովազ)։ Ժայռապատկերի վերին մասում, կարծես որպէս վերնագիր, առանձնակի պատկերուած 2 նշանները հիմնաւորապէս համոզում են, որ պատկերուած շինութիւնը տաճար է։ Նշաններից առաջինը եգիպտական «աւազ, մեծ» իմաստն արտայայտող հիերոգլիֆն է (𐎏), երկրորդը՝ «տուն» հիերոգլիֆը (𐎐)։ Արդիւնքում, որպէս յատակագծի վերնագիր, ընթերցում ենք «Աւազ տուն», իմա՝ տաճար։ Պատմական Հայաստանի տարածքում է յայտնաբերուել նաեւ հնագոյն տաճարը։ Ուռհա քաղաքի մօտակայքում

³² Նոյն տեղում։

³³ Տե՛ս CANeW նախագծի տուեալները։

գտնուող եւ 800մ բարձրութիւն ունեցող Պորտաքար (Gobekli) բլրի վրայ գերմանացի հնագէտ Կ. Շմիդտը պեղել է մի հոյակապ տաճարական համալիր³⁴:

Շրջանաձեւ եւ ուղղանկիւն յատկապէս բնորոշ 20 տաճարներից կազմուած այդ համալիրը կառուցուել է Ք.ա. ժ. հազարամեակում եւ գործել է 2000 տարի, որից յետոյ, հաւանաբար քրմերի ցուցումով եւ ինչ-ինչ պատճառներով, ծածկուել է հողով ու լքուել: Պորտաքարի Ք.ա. ժ. հազարամեակի տաճարների մասին փոքր ի շատէ պատկերացում տալու համար նկար 18-ում բերուած են տաճարի երեք սիւնների պատկերներ: Այս տաճարական համալիրի աննախագէտ զարգացած մշակոյթը ենթադրում է, որ այն պիտի ունենար զարգացման նախնական փուլեր, որոնցից մէկն անկասկած Սիւնիքի ժայռապատկերների եւ վիշապաքարերի մշակոյթն է: Պորտաքարի տաճարների եւ Ուխտասար-Ջերմաձորի ժայռապատկերների ծագումնաբանական կապը նախ եւ առաջ պայմանաւորուած է այդ անկրկնելի կոթողները ստեղծողների հոգեւոր-աշխարհընկալումային համակարգի ընդհանրութեամբ: Դա են հաստատում նաեւ Սիւնիքի ժայռապատկերներում եւ Պորտաքարի տաճարներում պատկերուած սրբազան կենդանիների եւ նշանադրերի նոյնութիւնը: Սա առանձին ու այլ ծաւալուն յօդուածի նիւթ է:



Նկար 18.

³⁴

K. Schmidt, *Sie bauten die ersten Tempel. Das rätselhafte Heiligtum der Steinzeitjäger*. Munich: C. H. Beck Verlag, 2006.

Ե. ՍԻՆԻՖԻԻ ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԵՒ ԵԳԻՊՏԱԿԱՆ
ՀԻԵՐՈԳԼԻՖՆԵՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ

1. Նախորդ էջերում կատարած քննությունն արդիւնքում պարզեցինք, որ Ուխտասար-Ջերմաձորի ժայռապատկերները


ա. պատկերա-գաղափարագիր գրային համակարգ է,

բ. գաղափարագրություն հիմքը հայերէն լեզուամտածողութիւնն է,

գ. փորագրուել են Ք.ա. ԺԸ-ԺԱ. հազարամեակներում:

Այս պարագայում իրաւասու ենք ենթադրել, որ Ուխտասար-Ջերմաձորի ժայռապատկերային գիրը աշխարհում առ ախօրյայտնի հնագոյն գրային համակարգն է: Հետեւաբար, տրամաբանական է նաեւ ենթադրել, որ այն հաւանաբար պիտի ազդեցութիւն ունենար իրենից շատ աւելի ուշ (Ք.ա. Դ. հազարամեակի վերջ) ծագած շումերական եւ եգիպտական գրերի վրայ: Այս ենթադրությունը ստուգելու ամենաուղղակի ճանապարհը շումերական նախասեպագրային շրջանի պատկերագրերի եւ եգիպտական հիերոգլիֆների համեմատութիւնն է Ուխտասար-Ջերմաձորի ժայռապատկերների նշանագրերի հետ: Սոյն աշխատանքում այդ համեմատութիւնը կատարել ենք եգիպտական հիերոգլիֆների համար: Համեմատութիւնը կատարել ենք եգիպտական հիերոգլիֆների գարդիներեան խմբաւորման համաձայն, իսկ արդիւնքները ստորեւ բերուած են աղիւսեակի տեսքով:

ա. Մարդ եւ մարդու մարմնի մասեր

1		
2		
3		
4		

5		
6		
7		
8		
9		
10		
11		
12		
13		
14		
15		
16		
17		
18		
19		
20		
21		
22		
23		

24		
25		
26		
27		
28		
29		
30		
31		


բ. Կենդանիներ

1	   	  
2	 	
3	  	 
4	  	
5	    	
6	    	 
7	  	 
8	    	 

9		
10	 	
11	    	
12		
13	     	 
14	     	 
15	  	
16	  	   
17	 	 
18	 	
19	 	 
20		
21	 	

գ. Կենդանիների մասեր

1	      	  
2	  	
3		 
4	 	



5		
6		
7	      	
8	 	
9		
10		
11		
12	  	
13	    	
14	   	
15		
16	 	
17	 	
18	 	
19	     	
20	    	 
21	  	
22		

23		
24	 	 
25		
26		  

դ. Թռչուններ

1		
2		

ե. Սողուններ և երկկենցաղներ

1	  	
2	 	
3	  	 
4		
5	 	
6	 	
7	 	 

զ. Ջուկ և ձկան մասեր

1		
2	 	

3		
4		

Է. Մանր կենդանիներ










1		
2	 	

Ը. Բոյսեր


1	  	 
2	 	
3	       	  
4		
5	 	
6	  	
7		
8		

Թ. Նրկիմբ, նրկիթ, ջուր

1	   	
2	   	
3	   	

4		
5		
6		
7		
8		
9		
10		
11		
12		
13		
14		
15		
16		
17		

Ժ. Շինութիւններ, շինութեան մասեր

1		
2		
3		
4		
5		

6		
7		
8		
9		
10		
11		
12		
13		
14		
15		
16		
17		

Ժա. Նաւեր, նաւի մասեր

1		
2		
3		
4		
5		
6		
7		

8		
9		
10		
11		
12		

Ժբ. Տնային կահոյք

1		
2		




Ժգ. Տանարական կահ-կարասի և սրբազան խորհրդանշաններ

1.		
2		



Ժդ. Թագեր, գառազաններ

1		
2		
3		
4		
5		

ժե. Պատերազմ, որս, սպանդ

1		
2		
3		
4		
5		
6		
7		
8		
9		
10		
11		
12		
13		


ժգ. Երկրագործություն, արհեստներ

1		
2		
3		
4		

5		
6		
7		
8		
9		
10		
11		
12		
13		
14		
15		

ԺԷ. Պարան, բել, կողովներ եւ այլն

1		
2		
3		
4		
5		
6		
7		




8		
9		
10		
11		

Ժբ. Հաց և բխումներ



1		
2		
3		


Ժբ. Երկրաչափական ճշանկներ

1		
2		
3		
4		
5		
6		
7		
8		

9		
10		
11		
12		
13		
14		
15		
16		
17		
18		
19		
20		

ի. Չդասակարգուած նշաններ

1		
2		
3		
4		
5		

6		
7		
8		
9		
10		
11		
12		

2. Ուխտասար-Ջերմաձորի ժայռապատկերներում առանձնացրել ենք 450-500 նշաններ (նշանների թուի անորոշութիւնը գալիս է երկու կամ աւել նշաններից կազմուած կցագրութիւնների հաշուառման մեթոդից): Աղիւսեակում բերուած տուեալները փաստում են, որ այդ նշաններից 229-ի համար գոյութիւն ունեն համապատասխան եգիպտական հիերոգլիֆներ: Եթէ հաշուի առնենք, որ եգիպտական հիերոգլիֆիկ գրային համակարգը կազմուած է մօտ 700 ամենագործածական հիերոգլիֆներից (միջին թագաւորութեան շրջանում՝ Ք.ա. Գ. հազ. վերջ-Ք. հազ. սկիզբ), ապա ստացւում է, որ դրանցից աւելի քան 30% իր կրկնօրինակն ունի Ուխտասար-Ջերմաձորի 802 ժայռապատկերներում: Սա ընդհանրութեան շատ բարձր աստիճան է, եթէ հաշուի առնենք նաեւ, որ

ա. եգիպտական հիերոգլիֆները ներկայացնում են գրի առաւել զարգացած ժամանակաշրջան, կիրառման աւելի լայն շրջանակ (զարգացած բրոնզի դարի հոգեւոր-մշակութային, առեւտրա-տնտեսական, վարչական եւ այլ ասպարէզներ) եւ, վերջապէս, արդէն մօտ 1000-ամեայ պատմութիւն ունեցող հզօր պետութիւն:

բ. Ուխտասար-Ջերմաձորի քննարկուած 802 ժայռապատկերները ներկայացնում են գրի նախնական ժամանակաշրջանը, ունեն բացառապէս պաշտամունքային նշանակութիւն, մի քանի

հարիւր կմ² տարածքում սփռուած հազարաւոր ժայռապատկերներն էր միայն փոքր մասն են կազմում:

Քննարկելով խնդիրները շրջանակը առաւել է կարեւորում ժայռապատկերների համակարգուած հետազոտման խնդիրը: Նշենք նաեւ, որ նրանցից շատերը ոչնչացման եզրին են եւ գուգահեռաբար պէտք է մշակուեն ինչպէս հետազոտման, նոյնպէս պահպանման պետական ծրագրեր:

3. Ըստ ընդունուած տեսակէտի եզրիպտական հիերոգլիֆները, որպէս գրային համակարգ, ձեւաւորուել են եզրիպտական պփտականութեան ձեւաւորման շրջանում (Ք.ա. Դ. հազ. վերջ): Դրա մասին է վկայում նաեւ այն փաստը, որ «պապիրուսի փաթեթ» (—) եւ «գիր, գրագիր» (𓆎) հիերոգլիֆների հնագոյն տարբերակները յայտնուում են առաջին դինաստիայի ժամանակաշրջանի տեքստերում:³⁵ Պապիրուսի հնագոյն օրինակը եւս վերաբերում է առաջին դինաստիայի ժամանակաշրջանին եւ յայտնաբերուել է ագնուական Հեմակայի դամբարանում:³⁶ Սակայն հնագիտական նիւթը փաստում է, որ հիերոգլիֆիկ նշանները Եգիպտոսի տարածքում գործածուել են նաեւ աւելի վաղ: Վաղեմութեան առումով խօսքը նախ եւ առաջ վերաբերում է արեւելեան անապատում յայտնաբերուած ժայռապատկերներին, որոնց թուագրումը պէտք է կապել Նեղոսի հովտի հնագոյն պեղածոյ նիւթի տարիքի հետ: Ժայռապատկերները գտնուում են այն ուղիների վրայ, որոնցով Կարմիր ծովով նաւարկած եկուորներն անցել են Նեղոսի հովիտ եւ հիմնել եգիպտական քաղաքակրթութիւնը: Ստորեւ բերուած են Վաղի Համմատի (նկար 19, առաջին պատկեր) եւ Վաղի Աթուանի (նկար 19, երկրորդ պատկեր) ժայռապատկերներից մէկական նմոյշ:



Նկար 19.

³⁵ М. Коростовцев, Введение в египетскую филологию, Москва, 1963.

³⁶ W. Emery, Excavation at Saqqara, the tomb of Hemaka, Cairo, 1938.

Նրանցում, ինչպես Սիւնիքի ժայռապատկերներում, գերակշռում են Հայկական լեռնաշխարհի էնդեմիկ կենդանու՝ կեռապող բեզդարեան այծի պատկերները եւ վերացական նշանները եւս նոյնական են Սիւնիքի ժայռապատկերների նշանների հետ:

Եզրպտական ժայռապատկերներից մինչեւ հիերոգլիֆիկ գրային համակարգի ձեւաւորումն ընկած ժամանակահատուածում (Ք.ա. Ե-Դ. հազարամեակներ) նոյն նշանները տեսնում ենք քարէ կամ կաւէ անօթների, պալիտրաների վրայ: Ստորեւ բերւում են եզրպտական այգպիսի մի քանի տասնեակ նշանների համեմատութիւնը Սիւնիքի ժայռապատկերային նշանների հետ³⁷:


	Ուխտասար	Եզրպտոս			Ուխտասար	Եզրպտոս
1				18		
2				19		
3				20		
4				21		
5				22		
6				23		
7				24		
8				25		
9				26		
10				27		
11				28		

³⁷ Եզրպտական նշանները վերցուած են հետեւեալ աշխատութիւններից. W.M. Flinders Petrie, Naqada and Ballas, London, 1986; W.M. Flinders Petrie, Tarkhan I and Memphis V, London, 1913; W.M. Flinders Petrie, Prehistoric Egypt, London, 1920; G. Brunton, Qau and Badari I, London, 1927.

12				29		
13				30		
14				31		
15				32		
16				33		
17				34		

Այստեղ եւս անվիճելի են Սիւնիքի ժայռապատկեր նշանների եւ եզրիպտական նշանների նոյնութիւնը: Ընդ որում, այս ժամանակահատուածի նշաններից շատերը, որպէս գիր, հետագայում դուրս են մնացել գործածութիւնից եւ չեն մտել հիերոգլիֆների ցանկի մէջ: Այս փաստը եւս խօսում է այն մասին, որ եզրիպտական հիերոգլիֆիկ նշանները եզրիպտոս են ներմուծուել պատրաստի վիճակում եւ նրանց հիմքի վրայ է հետագայում ձեւաւորուել հիերոգլիֆիկ գրային համակարգը:

4. Մինչ այժմ Սիւնիքի ժայռապատկեր նշանների եւ եզրիպտական հիերոգլիֆիկ նշանների համեմատութիւնները հիմնականում կատարեցինք ժայռապատկերներից հանուած առանձին նշանների մակարդակով: Այժմ փորձենք տեսնել, թէ եզրիպտական հիերոգլիֆիկ նշանները ինչպէս են արտացոլուած կոնկրետ մի ժայռապատկեր կոմպոզիցիայում: Դրա համար ընտրել ենք «Սիւնիքի ժայռապատկերները» աշխատութեան №151/2 ժայռապատկերը (նկար 20):



Նկար 20.

Այս ժայռապատկերի առանձնացուած նշանների եւ եզրապատկան հիերոգլիֆիկ նշանների համեմատութիւնը բերուած է աղիւսեակի տեսքով: Ինչպէս տեսնում ենք, տուեալ ժայռապատկերի բոլոր նշանները, բացի կցազիր  նշանի, իրենց զուգահեռներն ունեն եզրապատկան հիերոգլիֆիկ նշանների մէջ: Արդիւնքում, օգտուելով եզրապատկան հիերոգլիֆների յայտնի իմաստներից, հնարաւոր է վերծանել եւ ընթերցել տուեալ ժայռապատկերը: Միւս կողմից, ժայռապատկերի վերծանման մէջ ներգրաւելով հայկական նիւթը (համանուններ, միջնադարեան նշանագրեր, ազգագրական նիւթեր եւ այլն), հնարաւոր է նաեւ ճշգրտել եզրապատկան հիերոգլիֆների իմաստն ու հնչողութիւնը:

Ժայռապատկերի նշանները	Եզրապատկան հիերոգլիֆները	Ժայռապատկերի նշանները	Եզրապատկան հիերոգլիֆները
			
			
			
			
			
			
			
			
			

Ձ. ԱՄՓՈՓՈՒՄ

Ի մի բերելով քննութեան ընթացքում կատարած միջանկեալ ամփոփումները, կարող ենք ասել, որ

1. Ուխտասար-Ջերմաձորի ժայռապատկերները պատկերագաղափարային գրով փորագրուած պաշտամունքային արձանա-

գրութիւններ են, որոնք ստեղծուել են վերին պալեոլիթի աւարտական փուլում (Ք.ա. ԺԸ-ԺԱ. հազարամեակներ):

2. Ինչպէս ամէն մի պատկերագրութիւն, այնպէս էլ Ուխտասար-Ջերմաձորի ժայռապատկերների պատկերագրութեան հիմքում դրուած է համահնչունութեան (համանունութեան) սկզբունքը: Ժայռապատկերներում առկայ կեդանիւնների պաշտամունքային յայտնի խորհրդարանութեան համեմատութիւնն այդ կենդանիների անուանումների հայերէն համանունների հետ ցոյց է տալիս, որ Ուխտասար-Ջերմաձորի վաղափարագրութեան հիմքում դրուած է հայերէն լեզուն:

3. Ուխտասար-Ջերմաձորի ժայռապատկեր նշանների եւ եգիպտական հիերոգլիֆների համեմատութիւնը ցոյց է տալիս, որ եգիպտական հիերոգլիֆների 30%-ից աւելին իրենց նոյնական նշաններն ունեն ժայռապատկերներում: Հետեւաբար կարելի է կարծել, որ Սիւնիքի ժայռապատկեր նշանները եւ եգիպտական հիերոգլիֆները ծագում են նոյն ակունքից: Հաշուի առնելով եգիպտոսում հիերոգլիֆիկ նշանների յայտնուելու ժամանակաշրջանի (Ք.ա. Զ-Դ. հազարամեակներ) նկատմամբ Ուխտասար-Ջերմաձորի ժայռապատկերների ստեղծման վաղեմութիւնը (Ք.ա. ԺԸ-ԺԱ. հազարամեակներ), կարող ենք մեր կատարած հետազոտութեան արդիւնքների հիման վրայ ենթադրել, որ եգիպտական հիերոգլիֆիկ նշանների ծագումնաբանական ակունքը Սիւնիքի ժայռապատկեր նշաններն են:

Աշխատանքը կատարուել է ANSEF-Հ HU-hist-849 դրամաշնորհի օժանդակութեամբ:

ՀԱՄԼԵՏ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ*

* Հեռ. (37410) 35-00-28, e-mail: hmart@crdlx5.yerphi.am, hamletmartirosyan@yahoo.com

Genealogical Relations between Armenian Petroglyphs and the Egyptian Hieroglyphic Script

HAMLET MARTIROSSIAN*

(summary)

The petroglyphs of Ukhtasar-Jermadzor are religious inscriptions, using a pictographic-ideographic script, created during the final phase of Upper Paleolithic Period (18th-11th millennia B.C.).

The pictographic system of Ukhtasar-Jermadzor is based, similar to other pictographic systems, on the principle of acrophony. The comparison of the well-known religious symbolism of animals in these petroglyphs with the Armenian names of the same animals shows that the Ukhtasar-Jermadzor pictographic-ideographic system was based on the Armenian language.

The comparison of Ukhtasar-Jermadzor petroglyphs with Egyptian hieroglyphs shows more than 30% similarity among the signs used in both systems. It is therefore possible to assume that Egyptian hieroglyphs and the petroglyphs of Siunik have the same origins. Taking into consideration the fact that the Ukhtasar-Jermadzor petroglyphs were created much earlier, in the 18th-11th millennia B.C., than the Egyptian hieroglyphs, which are from 6th-4th millennia B.C., it is possible to reason, based on the results of this investigation, that the Egyptian hieroglyphs signs originate from the Siunik petroglyphs.

* Tel. (37410) 35-00-28, e-mail: hmart@crdlx5.yerphi.am, hamletmartirosyan@yahoo.com